ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մայիսյանի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ Հովունիի ԲՄԿ-ի բուժքրոջ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար :

ՀՀ Կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման համաձայն մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Մրցույթին մասնակցելու համար միջին բուժանձնակազմին ներկայացվող

1.պարտադիր պայմաններնեն՝

ա.միջին մասնագիտական կրթության առկայություն

բ.բժշկական էթիկայի կանոնների իմացություն,

2.լրացուցիչ պայմաններն են՝

ա.համակարգչով աշխատելու ունակություն.

բ.առնվազն մեկ օտար լեզվի իմացություն ,

գ.տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Թափուր տեղի հավակնորդի կողմից ներկայացվում է՝

1.դիմում

2.մեկ լուսանկար 3X4չափի.

3.քաղվածք աշխատանքային գրքույկից/աշխատանքային ստաժ ունենալու դեպքում/,

4.ինքնակենսագրություն .

5.անձնագրի, միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի /դիպլոմի/,վերապատրաստման վկայականի /դրա առկայության դեպքում/պատճենները,

6.օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքային թույլտվություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին անձնագրով /անձը հաստատող այլ փաստաթղթով/,նախատեսված փաստաթղթերի բնօրինակներով և պատճեններով անձամբ ներկայացնում է <<Մայիսյանի բժշկական ամբուլատորիա >>ՊՈԱԿ:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից /գյուղ Մայիսյան/ Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 25.02.2019թ.:

Հովունի ԲՄԿ-ի բուժքրոջ պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը կանցկացվի 2019թվականի փերվարի 28-ին ժամը 12:00-ին Մայիսյանի ԲԱ ՊՈԱԿ-ում:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել Մայիսյանի ԲԱ ՊՈԱԿ-ի աշխատանքային խմբին /ՀՀՇիրակի մարզ , գ.Մայիսյան ,հեռախոս 6-64-24/:Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացինների ներկայացրած փասթաթղթերը հետ չի վերադարձվում: